Զ. Յամ ժամանակս հրամայական եղանակի, յաւելլուն յաջորդ

բայքդ յընդունելութիւն կրճատեալ ՚ի եզականին․ որպէս․ будь, լե՛ր, կամ пусть будетъ, եղիցի՛, կամ լիցի՛․ իսկ ՚ի յոգնականին будьте, լերո՛ւք, կամ եղերո՛ւք, կամ пусть будутъ, եղիցի՛ն, լիցի՛ն։

Է․ Ընդունելութիւն յաներևոյթ եղանակի գնի ՚ի տրական հոլովն ՚ի վերջաւորութ կրճատեալ, և ՚ի բովանդակ ժամանակս յաւելու ՚ի նոյն բայդ быть, լինել, կամ լինիլ, կամ եղանիլ։

Ընդունելութիւն ներկայ ժամանակին յանգի ՚ի мый, և անցելոյն ՚ի нный կամ тый․ Գներբայքն յամ ժամանակս կազմին յընդունելութեց՝ համառօտելոց ՚ի ъ, յաւելեալ ՚ի ներկայ ժամանակին զբայդ будучи, լինելով, կամ գոլով․ իսկ ՚ի յանցելոյն, զբայդ бывши, կամ бывъ․ եղեալ, լինելով, ՚ի լինելն։

Ն․ վախճանի, արժան է գիտել և զայս․ զի ՚ի օրինակի բայից ներգործականաց և չէզոքականաց, ընդունելին և խոնարհին նմանապ՝ ներգործականաց և կրաւորականաց չէզոքականք և հասարակք․ պահելով զամ՝ ուրեք լոկ զանխորական վերջաւորութիւն ся, կամ сь.

Յաղագս ընդունելութեան։

Ընդունելութիւն (причастіе պրիչաստիե) է անուն ածական բղխեալ ՚ի բայից և ունի զպարագայս ՚ի բայից և ՚ի անուանց։

Նշանակեր առաջնոր․ զի իւրաքանչիւր ընդունելութին փակէ ՚ի իւրև զբայ և զյարաբերական դերանունդ который, ая, ое, կամ кто, որ․ կամ որ որք․ օրինակ իմն․ Человѣкъ, не желающій добра ближнимъ (կամ՝ которой не желаетъ) погрѣшаетъ противъ правилъ закона, այր, ոչ ցանկացող բարւոյ մերձաւորին, (կամ որ ոչ ցանկայ) մեղանչէ ՚ի դէմ օրինաց կանոնաց․ Человѣкъ гордящійся (կամ который гордится) своими знаніями поступаетъ противъ правилъ мудрости․ այր փքացող ՚ի գիտութիւն իւր (կամ որ փքանայ) վարի հակառակ կանոնաց իմաստութ։ Ընդունելութիւնք ունին զվեց սեռս ՚ի բայից յորոց և կազմին․ որգամ ներգործական, կրաւորական, չէզոքական,

ներգործակերպ չեզոքական, կրաւորակերպ չեզոքական, կամ ձայնակրական և հասարակ ։ Ունին ևս զչորս ժամանակս, ներկայ, անկատար, կատարեալ, և միոյ նուազի․ և հոլովին իբր օրինակի անուանց ածականաց․ ունելով զսեռս, զթիւս, և զհոլովս ։

Ընդունելութիւնք ՚ի կիր ածեալք իբր զօրութ անուանց ածականաց ունին զաստիճանս բաղդատականութ․ օր․ знающій, գիտող կամ գիտնական, знающѣе, գիտնագոյն, самый знающій, կարի գիտնական․ совершенный, կատարեալ, совершеннѣе, կատարելագոյն, совершеннѣйшій, ևս կատարելագոյն ։

## Յաղագս դերբայի ։

Դերբայն ( дѣепричастіе դեեպրիչաստիե ) նշանակէ զհանգամանս և զեղանակս գործողութ կամ կրելութ այնր բայի, առ որ վերաբերի նոյնն․ օրինակ իմն․ Человѣкъ упражняясь прилѣжно въ наукахъ и читая полезныя книги, просвѣщаетъ свой разумъ. այր՝ պարապելով զմակացութիւնք եռանդեամբ հոգւոյ և ընթեռնլով զգիրս օգտակարս լուսաւորէ զմիտս իւր ։

Ծանի՛ր աստանօր․ զի իւրաքանչիւր դերբայ պարունակէ զմի յո և իցէ ՚ի յետադաս բառից․ և ՚ի մեզ պատասխանէ գործիական և կամ, ներգոյական հոլովոյ աներևոյթ բայից․ որպիսիք են սոքին․ когда, երբ, յորժամ․ какъ, իբրև, մինչ․ поелику, զի, իբր որում, որով հետև․ օր․ Уча другихъ, сами учимся. փոխանակ ասելոյ когда учимъ другихъ, то и сами учимся. յուսուցանելն, կամ ուսուցանելով զայլս, մեք ևս՝ ուսանիմք․ որ նոյն է ասել, մինչ ուսուցանեմք զայլս, մեք ևս ուսանիմք ։

Սեռք և ժամանակք դերբայից են իբր ընդունելութեանց․ բայց ոչ ունին զթիւս, զդէմս, և ոչ ևս կարեն հոլովիլ ։

## Յաղագս մակբայից։

Մակբայն ( որ наречіе նարեչիե ասի առ ռուսս ) է մի յանհոլով մասանց բանի, որ տեղապա՛ դնի 'ի վե՛ր բային վա՛ս նշանակելոյ զպարագայս գործողութեա՛ն կա՛մ զորպիսութիւ՛ն նորին։ Նոյն բաղում մակբայք դնին նմանապէ՛ս և 'ի վե՛ր ածական անուանց վա՛ս ցուցանելոյ զպարագայս նոցին, որպէս. Богъ есть колико благъ, толико правосуденъ. այնքան է Ա՛ծ բարի, որքան է արդարադատ. Онъ учился лѣниво, и за то строго былъ наказываемъ. Նա ուսանէր հեղգաբար, սաստիկ և պատժեալ լինէր չարաչար։ Մակբայն 'ի ռուսաց լեզուոջ բաժանի 'ի տա-սըն և ինն տեսակս, որք և կոչին առ մեզ 'ի յաջորդ գրելոցդ։

### Ժամանակական ( время վրեմեա։ )

Теперь, այժմ, զարդիս, այժմոյս։ днесь, այսօր, կամ այժմ, այժմիկ։ додвесь, ցայսօր։ нынѣ, այսօր, և՛ս այժմ։ донынѣ, կամ понынѣ, ցարդ, ցայժմ, ցայսօր։ отнынѣ, յայսմ հետէ, այսուհետև։ уже, ահա, ահաւասիկ, աւանիկ։ древле, 'ի հնումն։ издревле, 'ի վաղուց, 'ի վաղնջուց։ вчера, և вчерась, երեկ։ давно, վաղ ուրեմն, վաղու եւս։ издавна, 'ի վաղուց, 'ի վաղնջուց։ всегда, завсегда, навсегда, միշտ, յար, հանապազ։ иногда, երբեմն, մերթ։ прежде, նախ, նախ առաջին. сперва, յառաջագոյն։ послѣ, յետոյ, զկնի, ապա։ покамѣстъ, пока, մինչ, մինչև, մինչդեռ։ доколь, доколѣ, մինչև, ցերբ։ искони, 'ի սկզբանէ։ впередъ, այսուհետև, յառաջ, կա՛մ նախ։

### Տեղական ( мѣсто մեստօ։ )

Гдѣ, куда, ուր, յո՛, ուրանօր։ здѣсь, тутъ, աստ, աստանօր։ вездѣ, ա՛մ ուրեք։ нигдѣ, ո՛չ ուրեք։ тамъ, туда, тутъ, անդ, անդէն. внѣ, արտաքս, 'ի դուրս, արտաքոյ։ извнѣ, отвнѣ, արտաքուստ, արտաքոյ։ индѣ, инуда այլուր։ сюда, այսր, աստ, աստանօր։ никуда, нѣкуда, ո՛չ ուրեք։ вспять, յետս։ отсюду, յա՛մ կողմանէ,

յայժմ դիմաց. доселѣ, ցայս վայր, և այսր. отселѣ, отсюда, աս-տուստ, աստի. оттуда, անտի. внутрь, 'ի ներքս, 'ի ներքս կոյս. снаружи, արտաքուստ, առ արտաքս. спереди, յառաջոյ, զառաջ-եաւ. сзади, յետուստ. далеко, далече, հեռի, 'ի բաց, 'ի բացեայ. издалека, издалече, 'ի հեռուստ, 'ի բացուստ. близко, մերձ, մօտ. свыше, 'ի վերուստ. вверх, выспрь, 'ի վեր. около, եզրև, շուրջ. среди, 'ի մէջ, 'ի մէջ, ը̄ մէջ. мимо, առ ընթեր, հուպ.

Որակական. (качество, կաչեստվօ.)

Хорошо, բարւոք. дурно, յոռեգոյն, վատթարագոյն. прямо, ուղղակի, ուղղապէս, դէպ ուղիղ. напрасно, тщетно, вотще, всуе, и суе, զուր, 'ի զուր, տարապարտուց, ը̄ վայր, 'ի նանիր, վայրա-պար, ընդունայն. удобно, անաշխատ, պատշաճապէս, դիւրաւ. трудно, դժուարաւ. громко, որոտ ը̄ որոտ, որոտագին. изустно, բերան 'ի բերան. дружески, բարեկամաբար. стремглавъ, կոր 'ի գլուխ, կամ խուճապաւ. Եւն.

Քանակական. (количество, կօլիչեստվօ.)

Много, շատ, բազում, յոլովակի. мало, սակաւ, սակաւ ինչ, սակաւիկ մի. нѣсколько, խուն մի, փոքր 'ի շատէ, փոքր ինչ, դուն ինչ. столько, այսքան, այսչափ, այնչափ, այնքան. полно, լիով, լիապէս, լրապէս. довольно, ը̄ բաւականին. сколько, որչափ, որ-քան. колико, քանի. толико, այսքան. Եւն.

Դասական. (порядокъ պօրեադօկ.)

Сперва, прежде, նախ, առաջին, նախառաջին, զառաջինն. сна-чала, 'ի սկզբանէ. потомъ, զկնի, յետոյ, ապա, յետ այնորիկ. на-конецъ, напослѣдокъ, 'ի վերջէ, 'ի վերջոյ, 'ի վախճանի. еще, դեռ ևս, տակաւին, դարձեալ, վերստին. опять, միւսանգամ, անդ-րէն, կրկին, կրկնակի. снова, вновь, նորոգ, նորապէս, նորոգապէս. паки, և ևս, կրկին, դարձեալ.

### Թուական․ (число թւոյ․)

Однажды, единажды, однократно, միանգամ, եւ՝ յառաջ միում, երբեմն․ дважды, двоекратно, двукратно, երկիցս, երկպատիկ․ трижды, троекратно, երիցս, երիցս անգամ․ многократно, բազում անգամ, յոլով անգամ, բազմապատիկ․ тмократно, բիւրիցս․ сугубо, կրկնապատիկ, կրկին․

### Ստորասական (утвержденіе կամ увѣреніе, ստուգու- թեան կամ ստորասութեան․

Такъ, այսպէս, այդպէս, այնպէս․ ей, այո․ точно, ճշդապէս, արդարեւ, կամ ճշմարիտ․ подлинно, ստուգիւ, ստուգապէս․ конечно, արդարեւ, յիրաւի․ да, այո․ ей, ей, այո այո․ истинно, ճշմարտիւ, ճշմարտապէս․ право, հաւաստեաւ, յիրաւի իսկ․

### Բացասական եւ արգելական (отрицаніе ուրացմանց․)

Не, ոչ, չ, մի․ нѣтъ, ոչ,] չէք․ никакъ, մի իւիք, ամենեւին, ոչ բնաւ․ ни, մի, ոչ, եւ․ ни ни, մի եւ մի․ ничуть, մի բնաւ, մի ամենեւին․ отнюдь, ամենեւին, ոչ բնաւ, ոչ երբեք․ եւն․

### Նմանական (уподобленіе նմանութեան․)

Какъ, որպէս, իբրեւ, մինչ, որպէս դիպող է․ такъ какъ, այնպէս, որպէս․ яко, будто, իբրեւ, զի, քանզի, որպէս, որպէս թէ․ подобно, նըմանապէս, նման․ равно, հաւասարապէս, միապէս․ такъ, նոյնպէս, նմանապէս, այդպէս, այնպէս․ сходно, համեմատաբար, համեմատ, դիւրագին․ будто бы, яко бы, որպէս թէ, իբրեւ թէ․ властно, точь въ точь, ճիշդ եւ ճիշդ, յատկապէս․ եւն․

### Յաճախական (напряженіе սաստկութեան․)

Весьма, зѣло, յոյժ, կարի․ очень, շատ, բազում․ наиболѣе, յաւէտ, առաւել․ особенно, особливо, наипаче, մանաւանդ, առանձին, առաւել․ гораздо, յոյժ, ըստ բաւականին, առաւել, աւելի

ևս ։ даже , մինչդի , մինչդի և , մինչ դի ևս , մանգամ ։ паче , առաւել , առաւել ևս , ևս առաւել , ևս քան զևս ։ крайне , մինչև յոյժ , յոյժ յոյժ ։

Նուազական ( ослабленіе օսլաբլենիե ։ )

Едва , чуть , чуть чуть , փոքր մի ևս , փոքր միւս ևս և , հազիւ ։ почти , գրեթէ , գոգցես ։ насильно , ակամայ , հարկաւ , բռնաբար , հազիւ ։

Համայնական կամ ժողովական ։ ( совокупленіе սովօկուպլենիե ։ )

Купно , вкупѣ , совокупно , ՚ի միասին , միանգամայն , համայն , համանգամայն ։ за одно , ընդ միահեծ , միահաղոյն ։ взаимно , փոխանակաւ , փոխադարձ , փոփոխակի , փոխ ընդ փոխ ։ вмѣстѣ , обще , ՚ի միասին ։ вообще , сообща , ընդ հանուր , բովանդակ , հասարակ ։

Ներհակական ( разность րազնօստ ։ )

Инако , различно , иначе , այլազգ , այլապէս , տարօրինակ , այլ ընդ այլոյ ։ особо , особъ , особенно , առանձին , ուրոյն ։ напрошивъ , ընդ հակառակս , ընդ դէմ , ներհակ ։ наединѣ , առանձնակի , միմիայն ։ вопреки , հակառակ , ներհակ ։ разно , պէսպէս , զանազան ։

Յանկարծական ( ускореніе ուսկօրենիե ։ )

Вдругъ , յանկարծ , անկարծումս ։ тотчасъ , առ ժամայն , իսկոյն , նոյն հետայն ։ нечаянно , յանկարծակի ։ мгновенно , ՚ի քթթել ական , յական թօթափել ։ незапно , внезапу , внезапно , յանկարծադէպ , յանպատրաստից ։

Զատական ( исключеніе , կամ изъятіе
իսկլյուչենիե , կամ իզեատիե ։ )

Только , токмо , միմիայն , և եթ , լոկ , սոսկ ։ точію , միայն , բայց միայն ։ лишь , այն ինչ , իբրև ։ развѣ , բաց , բաց ՚ի , մի թէ ։ неужели , մի թէ ։ единственно , եզակիանապէս , միապէս ։

Ցուցական ( Указаніе , ուկազանիե ։ )

Се , вотъ , на , ահա , ահաւասիկ , աւասիկ , ահաւանիկ ։

Մեկնական (изъясненіе իզեասնենիե ․)

То есть, сирѣчь, այսինքն, իբր է, իբր թէ ․ именно, а именно, այսինքն, յանուանէ ․ какъ то, իբր, որպէս, օրինակ իմն ․

Երկբայական (сомнѣніе սոմնենիե ․)

Авось, авось либо, можетъ быть, թերեւս, գուցէ ․ чуть, едвали, հազիւ, հազիւ հազ, ուր ուրեմն ․

Հարցական (вопрошеніе վօպրօշենիե ․

Для? почему? почто? зачемъ? հի՞մ, զի՞, ե՞ր վասն, յո՞ր սակս, ընդէ՞ր ․ когда? ե՞րբ ․ какъ? զիա՞րդ ․ развѣ, неужели, միթէ ․ что? զի՞նչ ․ гдѣ? ու՞ր, յո՞ ․ доколѣ? մինչեւ յե՞րբ, ցե՞րբ ․

Բազում մակբայք, ծագեալք յանուանց ածականաց, և յանգեալք ՚ի о, կարեն փոփոխիլ ՚ի ձեւն բաղդատական աստիճանաց ․ իբր ․ трудно, դժուարաւ, труднѣе, դժուարագոյն, очень трудно, յոյժ դժուարագոյն ․ легко, հեշտեաւ, դիւրաւ, легче, հեշտագոյն, весьма легко, յոյժ հեշտագոյն ․ եւն ․

Առ մակբայս վերաբերին, ևս ․ անուանք գոյականք ՚ի կիր առեալք միմիայն ՚ի հոլովն գործիական ․ իբր ․ мимоходомъ, հարեւանցի, ՚ի հարեւանցի ․ даромъ, ձրի ․ пѣшкомъ, հետի, հետիոտս ․ кругомъ, շուրջանակի ․ верхомъ, այրուձի, ձիաւոր, հեծեալ ․

Է ․ Յաճախ գոյական և ածական անուանք ՚ի կիր առեալք ՚ի հոլովս ինչ առանց նախադրութեց ․ կամ յարեալ ՚ի նոսին ․ իբր ․ дома, տանն, ՚ի տան ․ вкругъ, շուրջանակի ․ внутрь, ՚ի ներքս ․ вкрацѣ, ՚ի կարճոյ ․ вдругъ, յանկարծ ․

## Յաղագս նախադրութեանց ․

Նախադրութիւն (է ռուսաց предлогъ պրեդլօղ) ցուցանէ զյարաբերութիւն միոյ առարկայի առ այլ ․ և պահանջէ զխնդիր ՚ի պէսպէս հոլովական բառս ․ առաջի որոց դնի ․

Արդ՝ ոմանք ՚ի նախադրութեց առնուն զսեռական ․ և են սոքին ․

Для, ради, վասն, սակս, 'ի սակս, յաղագս ։ до, մինչ, մինչև, ց ։ отъ, изъ, 'ի, յ, առ 'ի ։ у, 'ի, յ, 'ի յ ։ возлѣ, подлѣ, մերձ, առ ընթեր, առ, հուպ ։ съ, со, 'ի, յ, 'ի յ ։ между, 'ի մէջ, 'ի միջի ։ безъ, առանց ։ кромѣ, опричь, բաց, բայց ։ противъ, ընդդէմ, հակառակ ։ окресть, շուրջանակի, զ, (պարառ ։) близь, մերձ, մօտ, առ ընթեր, հուպ ։

Ոմանք առնուն զտրական, և են սոքին ։ по, ըստ, 'ի, յ ։ къ, ко, 'ի, ց, ըստ, յ, առ ։

Ոմանք առնուն զհայցական և են սոքին ։

Въ, во, 'ի, յ ։ за, արտաքոյ, ևս՝ փոխանակ, փոխան, ևս՝ վասն, ևս՝ յայնկոյս ։ на, 'ի վերայ ։ подъ, 'ի ներքոյ, ստորև, ընդ ։ по, մինչ ց, ևս՝ զկնի, զհետ ։ предъ, առաջի, յառաջոյ ։ чрезъ, черезъ, 'ի, ընդ, ևս՝ 'ի ձեռն, միջնորդութեամբ ։ о, объ, 'ի ։ про, վասն, յաղագս, զ ։ сквозь, ընդ, ընդ մէջ ։

Ոմանք առնուն զգործիական, և են սոքին ։

За, զհետ, զկնի ։ надъ, 'ի վերայ ։ подъ, ներքոյ, 'ի ներքոյ; ստորև, ընդ ։ предъ, передъ, առաջի, յառաջոյ ։ съ, со, ընդ, համանդերձ ։ между, 'ի միջի, 'ի մէջ, ընդ մէջ ։

Ոմանք առնուն զներգոյական, և են սոքին ։

На, 'ի, յ ։ при, 'ի, յ, ևս՝ մերձ, առ ընթեր, ևս՝ առ, որ ունի զզօրութիւն անուանցս. 'ի ժամանակս․ առ ժամանակօք ։ въ, во, 'ի, յ ։ о, объ, վասն, յաղագս, որք ունին նաև զզօրութիւն պատմականի ։ по, զկնի, յետ, ևս՝ վասն, յաղագս, ևս՝ 'ի կողմանէ, 'ի մասին ։

Հնար է վերածել 'ի թիւս նախադրութեանց և զմակբայս, որք պահանջեն զխնդիր, որպիսիք են սոքին ։

Близко, մերձ, մօտ ։ внѣ; արտաքոյ ։ вдоль, ընդ երկայն ։ внутри, 'ի ներքս ։ мимо, մերձ, առ ընթեր ։ около, իբրև, շուրջ ։ прежде, յառաջքան, նախ քան ։ позади, զկնի, յետ, յետոյ ։ позади, յետուստ

՚Նախադրութիւնս вы, առ, արտ։ воз, առ, ընդ։ низъ, ներք, ստոր։ разъ, մի, և՝ անգամ։ пере, пре, գեր։ при, նախ։ ոչ պահանջեն զխնդիր, այլ յարակցեալ ընդ բառից իբրև զբաղադրական մասնիկս, վարին պէսպէս նշանակութ․ օր․ вынести, հաւաքել․ возвратить, низвергнуть, ընկենուլ, և՝ զգետնել, և՝ կործանել․ раздѣлить, բաժանել, անջատել․ претворить, փոխակերպել, այլակերպել․ прибѣгнуть, դիմել։ Այն և նախադրութիւնք են, որոց առեալ զխնդիր, զօդին ընդ բառից․ օր․ про, до, во, на, զորոց զնշանակութիւնս, տե՛ս ՚ի վերոյ․ օր․ Злые люди нападаютъ на добрыхъ, արք չարք յարձակին ՚ի վ̅ր բարեաց։

## Յաղագս շաղկապաց։

Շաղկապն (ըստ ռուսաց союзъ սօյուզ) է մասն բանի, որ զբանս և զամբողջ պարբերութիւնս միաւորէ ընդ միմեանս։

Շաղկապք ըստ նշանակութեան իւրեանց են։

### Նաղձևսական (соединительный սօեդինիտելնըյ։)

И, և։ же, իսկ, և։ не только, ո՛չ միայն։ но и, այլ և։ ниже, և ոչ, ո՛չ, և կամ՝ նաև։ да, և, նաև։

### Տրոհական (раздѣлительный ռազդելիտելնըյ։)

Или, либо, կամ, կամ թէ, և կամ թէ։ ли, և կամ․ եթ̅։

### Ենթական (условный ուսլօվնըյ։)

Ежели, буде, если, եթէ, թէ, զի թէ։ когда, յորժամ, երբ, եթէ։ тогда, յայնժամ։ если же, а ежели, буде же, իսկ եթէ, ապա թէ, այլ թէ։

### Անկատարական (уступительный ուստուպիտելնըյ։)

Хотя, хоть, թէ և։ թէպէտ և։ пусть, правда, թէ և, արդարև։

### Նացառացական (противуположный պրօտիվուպօլօժնըյ։)

Но, однако, а, же, բայց, այլ, սակայն, իսկ, բայց սակայն։ впрочемъ, ՚ի վ̅ր այսր ամ̅ի, հուսկ ուրեմն։ только, токмо, միայն,

միայն թէ, բայց միայն ։

### Պատճառական ( винословный վինոսլովնըյ ։ )

Ибо, զի, քանզի ։ поелику, փոխանակ զի, որովհետեւ ։ потому, ըստ որում, որովհետեւ ։ для того что, վասն, զի, վասն զի ։ чтобы, дабы, որպէս զի, առ 'ի ։

### Մակաբերական և հետեւողական ( заключительный զակլյուչիտելնըյ ։ )

И такъ, և արդ, և այսպէս ։ посему, почему, ապա ուրեմն, ըստ այսմ, այսպէս ։ слѣдовательно, ուրեմն, ապա ուրեմն, ապաքէն ։ для сего, для того, того ради, վասն, վասն այն, յայն սակս, վասն որոյ, սմին իրի, ուստի ։ убо, արդ, և արդ, վասն ։

Շաղկապք բաժանին 'ի նախընթացս, և 'ի վերջընթացս ։

### Նախընթացք են սոքին ։

Когда, յորժամ, երբ, մինչ ։ ежели, եթէ, թէ ։ хотя, թէ և, թէպէտ և ։ нетолько, ոչ միայն ։

### Վերջընթացք են սոքին ։

То, ապաքէն, ապա ուրեմն, երբեմն ։ однако, բայց, այլ, սակայն ։ но и, այլ և. ևս. իսկ.

Ежели будешь учиться прилѣжно, то успѣешь въ наукахъ, եթէ ուսանիցես անձանձիր, ապաքէն զարգասցես մակացութիւք ։

Хотя ученіе въ началѣ кажется трудно, но въ послѣдствіи бываетъ пріятно. Թէպէտ ուսումն 'ի սկզբան անդ երեւի դժուարին ։ այլ 'ի վախճանի լինի ախորժական ։

## Յաղագս միջարկութեանց ։

Միջարկութիւն ( ըստ ռուսաց междометіе մեժդոմետիե ) է մասն բանի, որ զպէսպէս կիրս, և կամ զներքին զգացումն հոգւոյն յայտ առնէ,

Միջարկութիւնք զօրութ նշանակութեանց իւրեանց են բազմօրինակք, որոց տեսակք և անուանք են ըստ հետագայիցդ, և 'ի ռուսս ցուցանեն ։

Խնդական կամ ախորժական ( радость, ռադօստ. )

Ура! վա՜շ, կեցցե՛ արքայ. га! վա՜շ վաշ.

Սգական կամ ողբական ( печаль պեչալ. )

Ахъ! ո՜հ, աւա՜ղ. ахти! եղո՜ւկ. увы! ո՜վ, եղո՜ւկ. горе! վա՜յ, աւա՜ղ.

Զարմացական ( удивленіе ուդիվլենիե. )

Исполать! ո՜վ. а! ո՜վ, բա՜րէ. о! ո՜վ, ո՜վ Թէ. ой ли! բա՜րէ. бы! ո՜վ. то то! բա՜րէ.

Արհամարհական, ծանակական ( презрѣніе պրեզրենիե. )

Э! վա՜շ. эхъ! վա՜շ վա՜շ. у! ո՜. фу! ո՜հ ո՜հ.

Զարհուրական ( боязнь բօեազն. )

Ай! ո՜վ. ա՜յ. ахъ! ո՜հ, ո՜. ой! ո՜հ, ո՜հ ո՜հ.

Սպառնալական, կամ խրոխտական ( угроженіе ուգրօժենիե. )

А а! ա՜ ա՜. Յորդորական ( понужденіе պօնուժենիե. )

Ужо! ո՜վ. вотъ! то! օ՜ն. ну! ա՜ղէ, հա՜պա. нуже! օ՜ն.

Կոչական ( зовъ, զով ) կամ призываніе պրիզիվանիե.

Эй! ո՜վ, ո՜վ դու. гей! о! ո՜. ай! ա՜յ.

# ՅԱՂԱԳՍ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆ.

Համաձայնութիւն (Словосочиненіе ասացեալ 'ի ռուս) ցուցանէ, թէ զիարդ պարտ է դասաւորել զբառս, կամ զիարդ կարգել զմին ըստ միւսոյն, զորս արժան է գրել. զի խորհրդածութիւն նախադասութեան կամ կատարեալ բան ունի զենթակայ և զստորոգեալ. Ենթակայ կոչի դէմքն, կամ իրն, զորմէ ասի ինչ. և ստորոգեալ այն՝ որ ասի զենթակայէ. օրինակ ինչ. Богъ есть творецъ міра. Ա.Ծ է արարիչ աշխարհի. ուր բառդ Богъ, է ենթակայ, զորմէ ասի ինչ. իսկ творецъ міра, է ստորոգեալ, որ ստորոգի զնմանէ. բայց ենթակայն ոչ միշտ և յամի դնի յառաջոյ. այլ՝ յաճախակի դնի նաև 'ի վերջոյ բայց և այնպէս միշտ մնայ ենթակայ.

### Յաղագս համաձայնութեան փոփոխման անուանց.

Ա. Հարցմանցս кто? ո՞վ, ո՞. և կամ что? զի՞նչ, պատասխանեմք ուղղականաւ. Օր. Кто создалъ міръ? Ո՞վ ստեղծ զաշխարհս. Богъ Ա.Ծ. Кто основалъ Римъ? Ո՞ եարկ զհիմն Հռոմայ. Ромулъ, Հռոմուլոս. Что изнурило твое сердце? զի՞նչ մաշեաց զսիրտ քո, печаль, տրտմութիւն.

Բայս կամին, կոչի 'ի մեզ անուն բայի, որ նշանակէ զուեր գործողութիւն, զորմէ տես 'ի նոր քերականութեան լեզուիս հայոց, զոր յայտ 'ի 1827. ամի 'ի մոսկով քաղաքի տպագրեաց հարազատ որդին մեր Լ.ը միանն Միքայէլ Սարգսեան Սալլանթեան.

Բ. Երկու անուանք դիմականք կամ և բազումք՝ վերաբերեալ առ մի դէմ, իր, դնին 'ի մի հոլով. Օր. Христосъ преобразился на горѣ Θаворѣ. Ք.Ս այլակերպեցաւ 'ի լեառն Թաբոր. Римлянамъ проповѣдалъ Христово ученіе апостолъ Павелъ. առաքեալն Պօղոս քարոզեաց Հռոմայեցւոց զվարդապետութիւն Ք.Ի.

Դ. Գոյական անունն բացայայտիչ այլոյ անուան՝ պատշաճեալ երկուց կամ բազում անուանց, 'ի կիր առնի 'ի թիւն յոգնական. եղեալ շաղկապաւ կամ առանց շաղկապի. Апостолъ Петръ и Павелъ ученіемъ Христовымъ просвѣтили многіе языки. առաքեալքն Պետրոս և Պօղոս վարդապետութեամբն Քրիստոսի լուսաւորեցին զբազում լեզուս. Ипократъ и Галенъ почитаются отцами врачебной науки. Հիպոկրատէս և Գաղիէնոս համարին հարք (իբր հեղինակք) բժշկական արհեստից.

Զայս կանոն կոչեմք մեք բացայայտիչ և բացայայտեալ.

Ե. Յորժամ գոյական անուանք են՝ նշանակիչք այլ և այլ իրաց դնին առանց շաղկապի, յայնժամ մին յայնց՝ զորմէ հարցանի բառն чей? կամ чья? և կամ чье? որո՞յ, կամ ո՞յր. 'ի կիր առնի 'ի հոլովն սեռական. օր. Благочестіе есть крѣпкое утвержденіе Государствъ, красота вѣнцевъ царскихъ, нераздѣльное соединеніе человѣческаго общества. բարեպաշտութիւն է հզօր հաստատութիւն թագաւորութեանց գեղեցկութիւն արքայական թագից, անբաժանելի միաւորութիւն ընկերական մարդկան. Праздность есть источникъ пороковъ. պարապորդութիւն է աղբիւր մոլութեանց. Молчаніе есть знакъ благоразумія. լռութիւն է նշան խոհեմութեան. Այս կանոն կոչի 'ի մեզ յատկացուցիչ և յատկացուցեալ.

Զ. Անուանք գոյականք՝ որք նշանակեն զկշիռ կամ զչափ, պահանջեն զխնդիր 'ի հոլովն սեռական. օր. пудъ муки, չորս լիտր ալեր. четверикъ овса, մի լիտր գարւոյ. аршинъ сукна, կանգուն չուխայի՝

Է. Գոյական անունն նշանակիչ նիւթոյ՝ յորմէ կազմեալ իցէ իրն, դնի 'ի հոլովն սեռական համեմատ նախադրութեանց՝ изъ, 'ի, առ 'ի, յ. 'ի յ. օր. столпъ изъ мрамора, սիւն 'ի մարմարիոնէ. вѣнецъ изъ злата, թագ յոսկւոյ, (կամ ոսկեայ.)

Գիտելի է. զի այսպիսի անուանք և այլք՝ զի բացատրականս բացատրին 'ի լեզուի մերում, և է՝ զի ածականաւ. իբր որում եղան ձևոյն՝

Է ։ Անուանք տեղեաց հարցմանս откуда ? ուստի ․ ՚ի գործածին ՚ի սեռականն , զոր պարտ է փոխադրել ՚ի մեր բացառականս ․

Նախ առեալ լինին նախադրութիւ изъ , ՚ի , ՚ի յ , յ ․ երբ նշանակի ներքսակողմն ելոց ինչ ․ որպ ․ идти изъ церкви , изъ дому , изъ города , երթալ յեկեղեցւոյ , ՚ի տանէ , ՚ի քաղաքէ ․

Երկրորդ՝ առեալ լինին նախադրութիւ съ , ՚ի , յ ․ յորժամ նշանակին արտաքին երեսք կամ շարժումն ՚ի մակերեւութէ իմիք ․ съ улицы , ՚ի փողոցէ ․ съ рѣки , ՚ի գետոյ ․ съ моря , ՚ի ծովէ ․ съ горы , ՚ի լերանէ ․ съ острова , ՚ի կղզւոյ ․

Երրորդ առեալ լինին նախադրութիւ отъ , ՚ի , ՚ի յ , յ , երբ նշանակի սահմանն տեղւոյ , ուստի սկսանի շարժումն ․ որպ ․ отъ Москвы , ՚ի մոսկովայ ․ отъ Петербурга , ՚ի պետրուպոլսոյ ․

Հետազգայ անուանքդ՝ պահանջեն զխնդիր ՚ի հոլովն տրական ․ նախադրութիւ къ , ՚ի , առ , ց , ը , յ ․

Алчность , անյագութիւն , ագահութիւն ․ благоволеніе , կամք , բարեհաճութիւն ․ горячность , եռանդն ․ жадность , որկրամոլութիւն , ագահութիւն , ընչասիրութիւն ․ жалость , ցաւակցութիւն ․ ласка , շողոմութիւն , փաղաքշանք ․ любовь , սէր ․ ненависть , ատելութիւն ․ омерзѣніе , զզուանս , զազրութիւն ․ охота , իղձ , բաղձանք , ոս ․ руководство , նախակրթութիւն , հրահանգ ․ способность , ձիր , ընդունակութիւն , յարմարութիւն ․ страсть , չարչարանք , կիրք , մոլութիւն ․ презрѣніе , արհամարհանք , անարգանք ․ преданность , приверженность , հպատակութիւն , հնազանդութիւն ․ прилѣжаніе , փութաջանութիւն , արթնութիւն ․ состраданіе , վշտակցութիւն ․ склонность , միտումն , յօժարութիւն ․ усердіе , ջերմեռանդութիւն ․ ревность , նախանձաւորութիւն , փոյթ ․ привычка , սովորութիւն ․ пристрастіе , աչառութիւն , կողմնասիրութիւն ․ որպ ․ жадность къ богатству , ագահութիւն առ հարստութիւն ․ склонность къ ученію , յօժարութիւն առ ուսումն ․

ненависть къ пороку, ատելութիւն առ մոլութիւն. привычка къ трудолюбію, սովորութիւն առ աշխատասիրութիւն. եւ։

Ը. Անուանք տեղեաց հարցմանց куда? ուր, յո. դնին ՚ի տրականն հանդերձ նախադրութեամբ къ, ՚ի յ, առ, ց, ըստ. մինչ ասի զշարժման ՚ի սահմանս խնդրել ՚ի տեղի ինչ, կամ առ անձն ոք. որպէս. идти къ пріятелю, երթալ առ բարեկամ ոք. подойти къ городу, къ берегу, հասանել ՚ի քաղաքն, յեզրն.

Թ. Անուանք տեղեաց հարցմանց куда? ուր, յո. ՚ի կիր առնին ՚ի հոլովն հայցական. նախ՝ հանդերձ նախադրութեամբ въ, ՚ի, յ. երբ նշանակի ներքսակողմն. որպէս. ѣхать въ городъ, երթալ ՚ի քաղաքն. Петръ первый ходилъ войною въ Персію, Պետրոս Ա. չոգաւ ՚ի պարսկաստան ՚ի մարտ պատերազմի.

Երկրորդ՝ հանդերձ նախադրութեամբ на, ՚ի, յ. յորժամ ասի զշարժման ՚ի սորոյ ՚ի վերայ. կամ ՚ի միջոյ տեղւոյ ՚ի միւսն. որպէս. идти на гору, на поле, երթալ ՚ի լեառն, գնալ ՚ի դաշտ անդր.

Ժ. Անուանք տեղեաց հարցմանց гдѣ? որ է՛ որ տեղի. դնին ՚ի հայցականն, հանդերձ նախադրութեամբ чрезъ, ՚ի, ըստ, ՚ի ձեռն, միջնորդութեամբ. որպէս. Волга протекаетъ чрезъ многія области, Վոլգա գետն անցանէ ընդ բազում պետութիւնս. Россійскія войска прошли чрезъ Алпійскія горы, զօրքն ռուսաց անցին ընդ ալփից լերինսն.

ԺԱ. Անուանք տեղեաց հարցմանց гдѣ? ուր. յորժամ նշանակի մերձաւորութիւն, որ մերձաւոր գոլն. կամ սահմանակցութիւն, դնին ՚ի գործիականն, հանդերձ նախադրութեամբ подъ, ՚ի ներքոյ, կամ ըստ. և երբեմն ՚ի ներգոյականն, հանդերձ նախադրութեամբ при, ՚ի, յ, եւ՝ մերձ առ ընթեր, և կամ, առ. որպէս. Аннибалъ славную побѣду одержалъ надъ Римлянами при Каннахъ, Աննիբաղ արար զփառաւոր յաղթութիւն ընդ դէմ հռոմայեցւոց առ ընթեր կաննայ. подъ полтавою, մերձ ՚ի պօլտաւայ.

ժբ. Անուանք տեղեաց՝ հարցմանըս гдѣ? ուր. որ, զի ո՛ր տեղի. դնին ՛ի ներգոյականն կամ ՛ի տրականն, համդերձ նախադրութբ по, ըստ, ՛ի, ըն, ՛ի վր. որպ. плыть по морю, կամ моремъ, նաւել ՛ի ծովու. ѣхать сухимъ путемъ, գնալ ըն ցամաք ճանապարհ. плыть по рѣкѣ, գնալ (կամ նաւել) ՛ի վր գետոյ.

ժգ. Անուանք տեղեաց հարցմանըս гдѣ? ուր. յորժամ նշանակի ներքսակողմն ինչ, ՛ի կիր արկանին ՛ի հոլովն ներգոյական. ա. Համդերձ նախադրութբ въ, ՛ի, յ. որպ. жить въ Россіи, բնակել ՛ի ռուսաստան. բ. Համդերձ նախադրութբ на, ՛ի, յ, ՛ի վր. մինչ նշանակի մակերևոյթ ինչ. որպ. на островѣ, ՛ի կղզւոջ.

ժդ. Անուանք՝ որք նշանակեն զժամանակ հարցմանըս когда? կամ въ которое время? երբ, կամ յորժամ ժամանակի, ՛ի գործ ածին ՛ի հոլովն գործիական. որպ. весною, ՛ի գարնան, лѣтомъ, յամառան, днемъ, ՛ի տուընջեան, ночью, ՛ի գիշերի. որպ. днемъ трудимся, а ночью покоимся, վաստակեմք ՛ի տուընջեան, և հանգչիմք ՛ի գիշերի. Երբեմն և՝ ՛ի հոլովն հայցական՝ նախադրութբ въ, ՛ի, յ. և կամ ՛ի հոլովն սեռական՝ յաւելեալ ՛ի պատշաճաւոր ածական անուն. որպ. сіе случилось прошлаго года, այս պատահեցաւ յանցելում ամի.

ժե. Անուանք աւուրց եօթնեկաց՝ հարցմանըս когда? դնին ՛ի հայցականն նախադրութբ въ, во, ՛ի, յ. որպ. въ понедѣльникъ, յերկուշաբաթի. во вторникъ, յերեքշաբաթի. ևն.

ժզ. Անուանք տօնից, նաւակատեաց, և այլ նշանաւոր աւուրց՝ յետ հարցմանս кога? դնին մերթ ՛ի հայցականն համդերձ նախադրութբ въ, ՛ի, յ. որպ. въ Срѣтеніе Господне, ՛ի տեառնընդառաջի. въ Троицынъ день, ՛ի Հոգեգալստեան. въ заговенье, ՛ի բարեկենդանի.

Այլ երբեմն և դնին ՛ի ներգոյականն, համդերձ նախադրութբ о, կամ объ. որպ. о святкахъ, ՛ի յուլթօրէն (ծննդեան ջ՚նի.) объ масленицѣ, ՛ի վերջին եօթնեկի (բուն բարեկենդանի.)

ԺԷ. Նոյնպէս եօթնեկաց հարցմանց когда? տալով լինին նոյնպէս ՚ի հոլովն ներգոյական, հանդերձ նախադրութեամբ на, ՚ի վերայ, ՚ի, յ. որպէս. на святой недѣлѣ, յաւագնում եօթնեկի (աւագ զատկին.)

ԺԸ. Ի հարցմանս кого, զո՛վ, զո՞, կամ что, զի՞նչ. դնի հոլովն հայցական. որպէս. Богъ одарилъ человѣка разумомъ, Աստուած պարգեւեաց մարդոյ զմիտս. ученіе усовершаетъ природныя дарованія, ուսումն կատարելագործէ զբնական ձիրս.

ԺԹ. Ի հարցմանս кѣмъ, чѣмъ, յումմէ՞, յորմէ՞. դնեմք զհոլովն գործիական. որպէս. Дарій побѣжденъ Александромъ, Դարեհ պարտեցաւ յԱղեքսանդրէ.

Ի. Հետեւեալ բառքս առնուն զխնդիր ՚ի հոլովն ներգոյական հանդերձ նախադրութեամբ въ, ՚ի, յ.

Искуство, արուեստ, եւ՝ հմտութիւն. навыкъ, սովորութիւն. избытокъ, առատութիւն, աւելորդ. изобиліе, առատութիւն, յորդութիւն. нужда, պէտք, կարիք, կարօտութիւն. отчетъ, հաշիւ, համար. участіе, հաղորդակցութիւն, մասնակցութիւն. наставленіе, խրատ, հրաման, պատուէր. впечатлѣніе, տպաւորութիւն. преимущество, առանձնաշնորհութիւն, նա՝խապատուութիւն. умѣренность, չափ, չափաւորութիւն, բարեխառնութիւն. успѣхъ, զարգացումն, յառաջադիմութիւն, յաջողութիւն. որպէս. успѣхъ въ ученіи или въ предпріятіи, յառաջադիմութիւն յուսման, կամ ՚ի ձեռնարկութեան.

ԻԱ. Հետագայ անուանքս պահանջեն զխնդիր ՚ի հոլովն ներգոյական հանդերձ նախադրութեամբ о, объ,

Забота, հոգ. повѣсть, պատմութիւն, առասպել. попеченіе, հոգ, предстательство, ходатайство, միջնորդութիւն, բարեխօսութիւն. стараніе, ջանք, ճիգն. որպէս. имѣть ходатайство о людяхъ бѣдныхъ, բարեխօս լինել վասն աղքատաց.

ԻԲ. Նոյնէ հարկն պահանջեացէ առաջի առնել զեր եւս հետաքրքրել իմն, կամ գործեալ, զանազան պարտ է դնել.

ա. Գործիականաւ. որ. Ревность къ трудамъ поощряется наградою, փոյթ որ առ աշխատանս, քաջալերի վարձուք.

բ. Ներգոյականաւ. հանդերձ նախադրութեամբ на. որ. Точить ножикъ на брускѣ, սրել զդանակ 'ի վր̃ յեսանի.

գ. Բացառականաւ. հանդերձ նախդրաւս отъ, съ. որ. похудѣлъ съ печали, մաշեցաւ 'ի տրտմութե̃. умеръ отъ болѣзни, մեռաւ 'ի ցաւոյ. ևն.

Ածական անուանքս достоинъ, արժանի, արժանաւոր. полонъ, լի, պահանջեն զխնդիր 'ի հոլովն սեռական. որ. достоинъ похвалы, славы, награды, արժանի գովութե̃, փառաց, վարձու. полонъ воды, լի ջրոյ.

Ածական անուանքդ вѣренъ, հաւատարիմ, մտերիմ. любезенъ, սիրելի. подобенъ, նման. полезенъ, օգտակար. приличенъ, պատշաճ, ровенъ, հաւասար, տափարակ. угоденъ, հաճոյ. свойственъ, յատուկ, ընտանի. знакомъ, ծանօթ. извѣстенъ, յայտնի, ստոյգ. пристоенъ, պատշաճ, վայելուչ. послушенъ, հնազանդ, հլու, առնուն զխնդիր 'ի հոլովն տրական. որ. вѣренъ Государю, հաւատարիմ տեառն. подобенъ отцу, матери, հանգունատիպ հօր, մօր.

Ածականքս алченъ, ագահ. прилѣженъ, ժրաջան. рачителенъ, ուշադիր, երկասէր. способенъ, յարմար, ընդունակ. искрененъ, մտերիմ. усерденъ, ջերմեռանդն. готовъ, պատրաստ. щедръ, առատ, առնուն զխնդիր 'ի հոլովն տրական, հանդերձ նախդրաւս къ. որ. Алченъ къ приобрѣтенію богатства, ագահ առ ստացուածս մեծութե̃. способенъ къ ученію, ընդունակ ուսման.

Ածականքս жаденъ, лакомъ, ագահ. жалостивъ, անխնայող, ласковъ, շողոքորթ, պահանջեն զխնդիր 'ի հոլովն սեռական, նախդրաւս до. որ. жаденъ, лакомъ до денегъ, ագահ առ դրամս.

Հետադրեալ ածականքդ՝ блѣденъ, դեղին. богатъ, մեծատուն. боленъ, հիւանդ, տկար. великъ, մեծ. высокъ, բարձր. дикъ,

վայրենի. доволенъ, բաւական. древенъ, հին, վաղեմի. знаменитъ, երեւելի, հռչակաւոր. знатенъ, նշանաւոր, վսեմ. кротокъ, հեզ. малъ, փոքրիկ, տկար. низокъ, ներքին, ստորին, славенъ, փառաւոր. Պահանջեն երբեմն զխնդիր ՚ի հոլով գործիական. օրինակ իմն. высокъ ростомъ, բարձր հասակաւ. знатенъ породою, տոհմիւ չքնաղ. дикъ нравомъ, վայրենի բարուք.

Յաղագս համաձայնութեան ածական անուանց.

Կանոն. Ա.

Ածականն պարտ է համաձայնիլ ընդ գոյականին իւրում սեռիւ, թուով եւ հոլովով. որ. человѣкъ разумный, այր խոհական. земля плодоносная, երկիր արգաւանդաբեր.

Գիտելի է. զի սոյն կանոնի հետեւին թուական անուանք դասականք, ընդունելութիւնք եւ ածական դերանունք.

Կանոն. Բ.

Յորժամ ածականն վերաբերիցի յերկու եւ կամ յեւս բազում գոյական անուանս, յայնժամ դնի նա ՚ի յոգնականին. որ. Роскошь и праздность суть вредны, զեղխութիւն եւ պարապորդութիւն են վնասակարք. Гордость и высокомѣріе противны Богу и несносны людямъ, հպարտութիւն եւ ամբարտաւանութիւն են ներհակ Այ եւ անտանելի մարդկան.

Կանոն. Գ.

Յորժամ մի նշանակելոյ զմի եւ զնոյն իր, ՚ի կիր ածի անուն յատուկ եւ հասարակ, յայնժամ ածականն համաձայնի ընդ հասարակ անուան եւ ոչ ընդ յատուկ անուան ընդ սեռին եւ ընդ թուոյն. որ. Рѣка Днѣпръ по причинѣ множества пороговъ неспособна къ судоходству, Դնեպր (գետն) ՚ի պատճառս բազմութեան յորձանացն, անընդունակ է նաւագնացութեան.

Կանոն. Գ.

Ածական անուանք առաւել գոյականաց ՚ի գործ ածին ՚ի չէզոքական սեռի միայն. որ. Полезное должно предпочитать пріятному, զօգ-

տակաւին պարտ է յորդել յաւէտ քան զախորժելին . Богъ сотворилъ всяческая изъ ничего, Աստուած յոչնչէ արար զամենայն ։

Ծանի՛ր . զի խոտորի 'ի կանոնէս այսպիսի դիպուած, յորժամ ածականն 'ի կեր ածի 'ի ձև գոյականի, կամ 'ի վերաբերութիւն առ ածականս . զորոյ՝ խնայելով լինին անուանք գոյականք ո և իցէ սեռի պաշտօնեալք . Օր. Люби ближняго, սիրեա զընկեր ։

Ածականք искусенъ, վարժ, հմուտ . исправенъ, ուղիղ, ճիշդ . дивенъ, սքանչելի, հիանալի . твердъ, պինդ, կարծր . постояненъ, կայուն, անփոփոխ . крѣпокъ . պինդ, կարծր . ընդունին զխնդիր 'ի հոլովն ներգոյական հանդերձ նախդրաւս въ . Օր. искусенъ въ наукахъ, ներհուն մակացութեանց . дивенъ во святыхъ, սքանչելի 'ի սուրբս ։

Ածականք бережливъ, խնայող . дерзокъ, յանդուգն . похожъ, նըման . ընդունին զխնդիր 'ի հոլովն հայցական հանդերձ նախդրաւս на . Օր. бережливъ на деньги, խնայող 'ի դրամս ։

Ածականք согласенъ, համաձայն, միաբան . сходенъ, դիւրագին, համեմատ . сообразенъ, պատկերակից . сходственъ . համաքատակ . պահանջեն զխնդիր 'ի հոլովն գործիական, հանդերձ նախդրաւս с, съ. Օր. согласенъ съ мнѣніемъ, համաձայն կարծեաց ։

Բաղդատական ածականք առնուն զխնդիր 'ի հոլովն սեռական . Օր. свинецъ и олово мягче прочихъ металловъ, կապար և անագ կակղագոյն են քան զայլ մետաղս ։

Գիտելի է . զի յորժամ դնիցին շաղկապքս какъ, нежели, յետ բաղդատական աստիճանի, յայնժամ սեռական խնդիրն բաղդատականի լինի տէր բայի . օրինակ իմն . наружныя язвы изцѣляются удобнѣе, нежели внутреннія болѣзни, արտաքին վէրք դիւրագոյն ողջանան, քան ներքին ցաւք ։ Գիտել արժան է . զի ածական անուանք ոչ նոյն օրինակ պահանջեն զխնդիր 'ի հայումս, որպէս 'ի ռուսս, այլ այլազգ ըստ որում երևին 'ի վերոգրեալ օրինակդ ։

Յաղագս համաձայնութեան անուանց թուականաց ընդ գոյականաց ։

Թուական անունդ одинъ, մի, և ամ̄ դասականք․ первый, առաջ-ներորդ․ второй, երկրորդ․ третій, երրորդ․ четвертый, չորրորդ․ пятый, հինգերորդ․ և այլք, երբեմն ընդունին զխն-դիր ՚ի սեռական հոլովն հանդերձ նախդրաւս изъ. օր․ одинъ Богъ, մի Ա.Ծ․ одна вѣра, մի հաւատ․ первый изъ философовъ, առա-ջին ՚ի փիլիսոփայից․ одинъ изъ учениковъ, մի յաշակերտաց ։

Թուականքդ два, три, четыре, մինչ դնիցին յուղղական կամ ՚ի հայցական հոլովս, պահանջեն զխնդիր ՚ի հոլովն սեռական եզակի թուոյ. օր․ два человѣка, այր երկու․ четыре недѣли, չորք եօթնեակք․ двѣ руки, ձեռք երկու ։

Թուական անուանքդ двое, երկոքեան․ трое, երեքեան․ четве-ро, չորեքեան․ пятеро, հնգեքեան․ шестеро, վեցեքեան․ семе-ро, եօթնեքեան․ осмеро, ութնեքեան․ девятеро, իննեքեան․ де-сятеро, տասնեքեան ։ Նոյնպէս пять, шесть, семь, և այլ բաց-արձակ թուականք առնուն զխնդիր յուղղական և ՚ի հայցական հոլովս․ ՚ի հոլովն սեռական յոգնակի թուոյ․ օր․ двое купцовъ, երկոքեան կամ երկու վաճառականք․ шесть недѣль, վեց եօթնեակք․ եւն ։

Գիտելի է․ զի թուականքս այսորիկ յայլ հոլովս համաձայնին ը̄ իւրեանց գոյականաց․ օր․ пятью чувствами, հինգ զգայարանօք․ семью недѣлями, եօթն եօթնեկօք․ եւն ։

Գիտելի է դարձեալ․ զի թուական անուանքդ՝ двое, трое, чет-веро, пятеро, և այլք, եթէ դնիցին ը̄ անեզական անուանց, ընդ-տառդ с, փոխեն ՚ի и կամ ы. օր․ двои часы, երկու ժամա-ցոյցք․ трои сани, երեք սահնակք ։

Յորժամ յո և իցէ հասակի նշանակի թիւ ամաց, յայնժամ թուա-կան անուանքն դնին ՚ի հոլովն սեռական․ օր․ Александръ Великій вступилъ на престолъ двадцати, а умеръ тридцати лѣтъ отъ

роду. մեծն Աղեքսանդր բազմեցաւ յաթոռ քսան ամաց, և մեռաւ ամաց երեսնից 'ի ծննդենէ.

### Յաղագս համաձայնութեան դերանուանց։

Անձական դերանուանքն` я, ты, онъ, мы, вы, они, 'ի ներկայն և յապառնին, նոյնպէս և յայլ ժամանակս հրամայականի եղանակի` յառաջոյ բայիցն կարեն զօրութեամբ իմացեալ լինել. իսկ զի դէմք այս ժամանակաց որոշին վերջաւորութեամբ իւրեանց. օր. вижу чудеса Божія, տեսանեմ զսքանչելիս Այ. Իսկ յայնպիսի ժամանակս, զորոց զդէմս անմարթ է որոշել վերջաւորութեամբ իւրեանց` ներգործութեամբ դնին այսորիկ դերանունք։

Յարաբերական դերանուանքդ` которой, кой, զի նախընթաց յարաբերելոյն իւրեանց դնին համաձայն սեռիւ և թուով. օր. добродѣтель есть такое сокровище, которое никѣмъ похищено быть не можетъ. առաքինութիւն է այնպիսի գանձ, որ ոչ յափշտակի յումեքէ։

Դերանուանքն` мнѣ, тебѣ, 'ի կիր առեալ փոխանակ ստացականացն` мой, твой. օր. онъ мнѣ отецъ, а тебѣ сродникъ. նա իմ հայր է, բայց քեզ ազգական. Դերանունդ свой, своя, свое, 'ի կիր առեալ 'ի վերաբերութիւն առ երիս դէմս, երբ 'ի բանս նշանակի նոյն յարաբերութիւն առ ո և իցէ դէմ. օր. լաւագոյն է առել. Лакедемоняне приучали дѣтей (своихъ) къ терпѣнію. քան թէ дѣтей (ихъ) Լակեդեմոնացիք ուսուցանէին զաւակս (իւրեանց) զհամբերութիւն, քան առել զաւակս (նոցա.)

Դերանունդ что, յոտանաւորս և 'ի զրոյցս սովոր առեալ լինի փոխանակ который, յարաբերական դերանուանդ. օրինակ իմն. о ты! что въ горести напрасно, на Бога ропщешь человѣкъ. Եղուկ քեզ որ յաղէտս` տրտունջս լինիս ով մարդ, զանձկայելեալ Այ տարապարտ։

Իսկ յորժամ առեալ լինի իբրև հարցական, յայնժամ առնու զխնդիր ուղղական զկնի իւր, մասնկամբս за, յաղագս, փոխանակ, 'ի պատճառս,

արտաքոյ, արտաքոյ քան ։ Իսկ 'ի յաջորդ օրինակդ՝ և յայսպիսիս դնի առ 'ի յաջորդ . գր . что за люди? ո՞վ են արքդ ։ Իսկ առանց մասնկանդ за, ընդունի զհոլովն սեռական . գր . что пользы? զի՞նչ օգուտ էցէ . что нужды? զինչ պէտք էցեն ։

Դերանուանքդ՝ самъ, топъ, чей, мой, нашъ, вашъ, оный, համաձայնին ընդ դիմականաց, ընդ որս յարին նոյնին սեռիւ, թուով և հոլովով . գր . самъ Богъ невинныхъ защищаетъ . նոյն ինքն Ա.Ծ պաշտպանէ զանմեղս ։

Յաղագս համաձայնութեան . բայից ընդ անուանց ։

Յորժամ բայն դիմաւոր վերաբերի առ երկու կամ յեռ բաղում անուն այլ և այլ դիմաց, յայնժամ դնի յոգնակի 'ի նմին դիմի, որ ունի զնախամեծարութիւն իմն քան զայլս . ընդ որոյ առաջին դէմն է նախապատիւ քան զերկրորդն . և երկրորդն քան զերրորդն . օրինակ իմն . братъ мой и я радуемся, что вы здоровы . եղբայր իմ և ես ցնծամք, զի դուք առողջ էք ։

Ներգործական բայ առնու զսեռական խնդիր 'ի հայցական հոլովն, թէ 'ի յանուանց և թէ 'ի դերանուանց . գր . почитай людей, и люди почитать тебя станутъ, պատուեա զմարդիկ, զի և մարդիկ պատուեսցեն զքեզ . тотъ славнѣйшую получаетъ побѣду, кто самаго себя побѣждаетъ . նա ընդունի զփառաւորագոյն մրցանակն յաղթութեան, որ յաղթէ անձին ։

Դիտելի է ա՛ . Զի ներգործական բայք՝ յարեալք 'ի մասնիկդ не, փոխանակ հայցականի ընդունին զսեռական . գր . не употребляй во зло могущества твоего во вредъ ближнему . մի՛ 'ի գործ դներ 'ի չարիս զկար զօրութեանդ 'ի վնաս մերձաւորին քո ։ Այլ առանց могущество, է սեռական խնդիր փոխանակ հայցականի բայիդ употребляй . բ՛ . Ներգործական բայք փոխանակ հայցականի մերթ ևս առնուն զսեռական . երբ գործողութիւն փոխան մասին առեալ լինի . գր .

спустить воды, թողուլ զջուր, այս է, զտակաւ մասն խել ջրոյ ։

Բայքդ ждать, սպասել, մնալ. желать, ցանկալ. лишать, զրկել. искать, որոնել. ожидать, սպասել. требовать, պահանջել. просить, խնդրել, հայցել. առնուն 'ի հոլովն սեռական. որ. ждать благопріятнаго времени, սպասել բարեյաջող ժամանակի. желать славы, чести, ցանկալ փառաց, պատուոյ ։

Բայքդ` пренебрегать, презирать, արհամարհել. պահանջեն ըզ խնդիր հայցական, կամ գործիական. որ. не пренебрегай наставленіями людей опытныхъ, մի՛ արհամարհեր զխրատ հմուտ արանց. Իսկ ասունդ наставленіями, է գործիական խնդիր փոխանակ հայցականի բայիդ пре..брегай.

Բայքդ` учить, ուսուցանել. уподоблять, նմանեցուցանել. բայց 'ի հայցականէն առնուն զխնդիր տրական. որ. учить кого исторіи, ուսուցանել ումեք զպատմագրութի. міръ сей уподобляютъ морю, а жизнь человѣческую галерѣ, զաշխարհ նմանեցուցանեն ծովու, իսկ զկեանս մարդոյ ցռկանաւի ։

Բայքդ` ссорить, աղմկել, օտարել. знакомить, ծանօթացուցանել. мирить, հաշտեցուցանել. согласовать, համաձայնել, միաբանել. разлучать, մեկնել, անջատել. сравнивать, հաւասարել, բաղդատել. բայց 'ի հայցականէն ընդունին նաև զխնդիր գործիական. որ. сребролюбиваго человѣка сравниваютъ съ грецкоѡ губкою, զարծաթասէրն նմանեցուցանեն սպնգոյ ։

Բայք ձայնակերպականք, բայց 'ի հայցականէ, որ միշտ և յետի փակի 'ի ся վերջաւորութիւն նոցին, առնուն եւս և զայլ հոլովս, որք համարին 'ի մէջ խնդիր բնաւ. որ. բայքդ` беречься, остерегаться, զգուշ լինել. держаться, պահիլ, զհետ երթալ. лишаться, զրկիլ. страшиться, զարհուրիլ. ужасаться, սասանիլ. առնուն զխնդիր 'ի հոլովն սեռական. որ. лишиться имѣнія, զրկիլ յընչից ։

Նայքդ` держаться, ըմբռնել, պահել, զհետ երթալ, ապաւինել. хватиться, ընկալեալ լինել. браться, ըմբռնել, կամ առեալ լինել. հանդերձ նախադրութեամբ за, առնուն զխնդիր ՚ի հոլովն հայցական. օր. держатся за кого, կամ за что крѣпко, ըմբռնել զոք, կամ զինչ ամրապինդ. браться за всякое дѣло, ձեռնամուխ լինել յամ՛ գործս.

Նայքդ` блюстися, պահպանել, զգուշանալ. оберегаться, զգոյշ լինել. спасаться, փրկել. отваживаться, համարձակիլ. оборонятьсе, պաշտպանել. воздерживатья, պահպանել, ունել. отвращаться, շրջել, դառնալ, խորշել. избавляться, ազատել. отговариваться, շրջել ՚ի խորհրդոց. уклоняться, խոտորել, հեռանալ. отлучаться, տարբերել, զերծանել. отбываться, դառնալ անդրէն, զերծանել. առնուն զխնդիր բունէ ՚ի հոլովն սեռական հանդերձ նախադրութեամբ отъ. օր. оберегаться отъ злыхъ людей, զգոյշ լինել յարանց չարաց. уклоняться отъ зла, խոտորել ՚ի չարէ.

Նայքդ` учиться, научаться, ուսանել. покориться, խոնարհել, հնազանդել. предаваться, մատնել, անձնատուր լինել. подвергаться, ենթադրել, ենթարկել. уподобляться, նմանել, համեմատանալ. дивиться, սքանչանալ. удивляться, զարմանալ. առնուն զխնդիր ՚ի հոլովն տրական. օր. Александръ великій учился у Аристотеля философіи, Մեծն Աղեքսանդր ուսանէր զփիլիսոփայութիւն յԱրիստոտելէ. предаться ученію, անձնատուր լինել յուսումն.

Նայքդ` приближаться, մերձենալ, հասել. приготовляться, պատրաստել, հանդերձել. примѣняться, փոփոխել. прижиматься, սեղմել, ճնշել. прилѣпляться, մածնուլ, յարել. приноравливаться, կցել, յարմարել. պահանջեն զխնդիր տրական նախադրութեամբ къ. օր. человѣкъ непрестанно приближается къ предѣлу своей жизни. մարդն անընդհատ մերձենայ ՚ի սահման կենաց իւրոց. примѣняться къ чьему праву. փոխել ՚ի վարս ուրուք.

Բայք՝ гнѣваться, сердиться, ցասնուլ, բարկանալ. ссылаться, յենալ, ապաստան լինել. полагаться, դնել, կարծել, համարել, յենալ. соглашаться, միաբանել, համաձայնել. առնուն զխնդիր հայցական նախադրութեամբ на. օր. полагаться на счастіе, յենալ ՚ի բարեբաստութիւն. соглашаться на предложеніе, համաձայնել ընդ առաջարկութիւն.

Բայք՝ именоваться, называться, յորջորջիլ, անուանիլ. почитаться, համարիլ, վարկանիլ. показываться, ցուցանիլ, երեւիլ. представляться, յանդիման կացուցանել, եւ՝ ներկայիլ. становляться, մնալ, կանգնիլ, իջեւանիլ, դառնիլ, լինել. казаться, երեւիլ, թուիլ. առնուն զխնդիր գործիական. օր. онъ почитается человѣкомъ добрымъ, նա համարի այր բարի.

Բայք՝ измѣняться, փոխանակիլ, փոփոխիլ. обманываться, պատրիլ, վրիպիլ. упражняться, պարապիլ, պատաղիլ. признаваться, խոստովանիլ, Ճանաչիլ. խնդրեն զներգոյական հոլովս նախդրաւ въ. օր. измѣняться, въ лицѣ, въ нравахъ, փոփոխիլ յերեսս, ՚ի վարս. упражняться въ чтеніи книгъ, պարապիլ յուսումն.

Բայք ձայնակրաւորականք, մանաւանդ ուրախականք, ունին մերթ զնշանակութիւն բայից կրաւորականաց, և յայնժամ, կամ ընդունին զխնդիր սեռական նախդրաւ отъ, կամ զգործիական. օր. утѣшаться надеждою, մխիթարիլ յուսով. нѣтъ сомнѣнія, что обладатели на землѣ отъ Бога поставляются, а не случаемъ державы достигаютъ. չիք ինչ տարակոյս, թէ իշխանքն յԱ՛յ կարգեն ՚ի վերայ երկրի, և ոչ թէ դիպուածով ինչ հասանեն իշխանութեան.

Ներգործականերպ չեզոքական բայք պահանջեն զխնդիր ՚ի հոլովս գործիական նախդրաւ съ, между. օր. знаться съ честными людьми, ծանօթանալ արանց պատուականաց. я часто съ нимъ видаюсь, ես յաճախ տեսանեմ զնա.

Հասարակ բայք ոչ միօրինակ պահանջեն զխնդիր · որպէս են բայ- քդ домогаться , նկրտել , ձեռն առնել · бояться , երկնչել , զարհու- րել · опасаться , կասկածել , խիթալ · слушаться , լսել լինել · պահանջեն զխնդիր սեռական · օր. · бояться Бога , երկնչել յԱյ · опасаться непріятелей , կասկածել 'ի թշնամեաց ·

Հասարակ բայքդ՝ смѣяться , ծիծաղել · молиться , աղօթել · повиноваться , հնազանդել · առնուն զխնդիր տրական · օր. · молить- ся Богу , յաղօթս կալ առ Ած ·

Հասարակ բայքդ՝ надѣяться , յուսալ · жаловаться , գանգատիլ · խնդրեն զհայցական նախադրութդ на . օր. · надѣяться на чью благос- клонность , յուսալ 'ի բարեհաճութիւն ուրուք ·

Բայքդ՝ каяться , զղջալ · раскаиваться , զղջալ , ապաշաւել · сомнѣваться , տարակուսել · առնուն զխնդիր ներգոյական նախադ- րութդ въ . օր. · Богъ тебя проститъ , лишь только искренно раскайся въ твоихъ преступленіяхъ . Ած ներեսցէ քեզ , եթէ զղջասցիս յամենայն սրտէ 'ի յանցուածոց քոց ·

Հասարակ բայքդ՝ заботиться , հոգալ , զբաղիլ · суетиться , պարապիլ · стараться , ջանալ · тщиться , փութալ , գուն գործել · пещися , հոգ տանել , փոյթ յանձին բերել · առնուն զխնդիր ներ- գոյական նախադրութդ о или объ . օր. · я старался о добромъ тво- емъ воспитаніи , но старанія мои были тщетны · փոյթ յանձին ունէի վասն բարի դաստիարակութեան քո · իսկ ջանք իմ ընդունայն եղեն ·

Բայքդ՝ издѣваться , насмѣхаться , наругаться , ծիծաղել , կա- տակել · сжалиться , ցաւակցել , խնայել · առնուն զխնդիր գործիա- կան նախադրութդ надъ . օր. · онъ надъ тобою только насмѣхается , նա ծիծաղի միայն զքև ·

Ոմանք 'ի չէզոքական բայից , բաց 'ի յուղղական հոլովէ , ոչ ընդու- նին զայլ խնդիր · որպէս են սոքա алкать , алкать , քաղցնուլ · блѣд-

нѣть, պլպղունել. бдю, հսկել. бодрствую, արթնել. бѣлѣть, սպիտականալ. краснѣть, կարմրել, շառագունել. Բայց ոմանք յայսցանէ պահանջեն զայլ խնդիրս. որ.

Բայքդ` есмь, бываю, առնուն զխնդիր ուղղական յառաջ և 'ի վերջոյ. որ. добродѣтель сама себѣ есть награда. առաքինութիւն ինքեան է վարձ.

Բայքդ` бываю, լինիմ. живу, կեամ, բնակիմ. слыву, прослываю, հռչակիմ, հրատարակիմ. փոխանակ ուղղականի, պահանջեն զգործիականն. որ. Александръ слыветъ великимъ, а Крезъ богатымъ. Աղեքսանդր համբաւի մեծ, իսկ Կրեսոս փարթամ։

Բայքդ` стоитъ, արժել. убѣгать, փախչել, խուսափել. избывать, ազատել, զերծանել. избѣгать, խոտորել, հեռանալ. պահանջեն զխնդիր սեռական. որ. это увеселеніе мнѣ многаго стоитъ. այդ հրճուանք արժէ ինձ բազում. убѣгать общества порочныхъ людей. փախչել 'ի միաբանութենէ մոլի արանց.

Բայքդ` убѣгать, փախչել, խորշել. отбывать, մեկնել. отходить, երթամ, մեկնիմ. отвыкнуть, դադարիմ ('ի սովորութենէ.) отпадать, մերժել, թօթափել. отступать, հեռանալ, խոտորել. առնուն զխնդիր 'ի հոլովն սեռական` նախդրաւ отъ. որ. отвыкнуть отъ худой привычки. դադարել 'ի չար սովորութենէ.

Բայքդ` завидовать, նախանձել. ревновать, նախանձաւոր լինել. внимать, անսալ, միտ դնել. радѣть, հոգալ, փոյթ տանել. присягать, երդնուլ. послѣдовать, հետևել, զհետ երթալ. подражать, հետևել, նմանել. усердствовать, ջերմեռանդանալ, եռալ սիրով. առնուն զխնդիր տրական. որ. не ревнуй лукавымъ, ниже завидуй творящимъ зло. մի՛ նախանձիր ընդ չարս, և մի՛ նախանձիր ընդ այնոսիկ որ գործեն զչարիս. послѣдую мудрымъ твоимъ совѣтамъ. զհետ երթայց զգօն խորհրդոց քոց.

Նայրդ` враждовать, Թշնամանալ. негодовать и роптать, տրտնջել. злобствовать, չարակնել, ոխանալ. походить, նմանել. уповать, ապաւինել. առնուն զխնդիր հոլովական նախադրութիւն на. որպէս. роптать на судьбу, տրտնջել զբաղդէ. уповать на Бога, ապաւինել յԱ՜ծ.

Չեզոքական բայք` յարեալք ընդ նախդիրս ունին երբեմն զնշանակութիւն ներգործական բայից. отлежать бока, անկանիլ ՚ի վերայ կողին. отстоять ноги, դադարիլ յոտին.

Կրաւորական բայք առնուն զսեռ խնդիր, կամ ՚ի հոլովս գործիական. որպէս. Азія трижды покорена была Скиөами, кои никакимъ народомъ побѣждены не были. Ասիա երիցս անգամ ընկճեալ նուաճեցաւ ՚ի սկիւթացւոց, որք յումեքէ ազգաց պարտեցան. կամ ՚ի հոլովս սեռական նախդրաւս отъ. որպէս. Семирамида убита отъ сына своего Нинія. Շամիրամ սպանաւ ՚ի Նինուէ որդւոյ իւրմէ.

Գիտելի. զի տարբերութիւն, որ ընդ մէջ եական բայիցս` буду и стану, որպէս, եղեց, կայանայ յայնմ, զի բայս буду ընդունի և խոնարհի ընդ ներգործական և կրաւորական բայից. որպէս. буду двигать, շարժեցից.

Նոյն` բայդ стану դնի միայն ընդ ներգործական սեռի բայից. որպէս. стану двигать, շարժեցից. стану писать, գրեցից. բայց շարժեցից ոչ է ՚ի կիր.

Դիմազուրկ բայքդ` зрится, երևի. икается, հեծկլտայ. довлѣетъ, բաւ է, շատ է. подобаетъ, վայել է. кажется, Թուի, երևի. хочется, կամ է. мнится, կարծի. надлежитъ, արժան է. удается, յաջող է. случается, պատահի, առնուն զխնդիր տրական. որպէս. кажется мнѣ, что. Թուի ինձ, Թէ.

## Յաղագս համաձայնութեան ընդունելութեանց և դերբայից.

